**Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ  Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 14)**

10 նոյեմբերի 2017թ. ժամը՝ 14³⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվության» ծրագրի մասին:

(Արմինա Դարբինյան)

2. Հայկական կարմիր խաչի կողմից իրականացվող «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի մասին:

(Աննա Եղիազարյան)

3. «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագրի մասին:

(Նորիկ Թունյան)

4. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղի դպրոցի վերանորգում» ծրագրի մասին:

(Արմինե Հարոյանյան)

## 5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.3 Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.4 «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):



5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպություն):

## 6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հիմնատավուշ» բարեգործական հիմնադրամ):

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):

6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի N Մ-760-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» բժշկական կենտրոն» հիմնադրամ):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N Մ-929-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի պատանեկան նվաճումներ):

6.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

6.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

## 7. Այլ հարցեր

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N Մ-820-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին(Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-597-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ):

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**նոյեմբերի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵԶՆԻԿ ՄՈՋՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԲԵՌՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՅԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 02/14/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 11,960,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ 2016 թվականի արտադրության «Ford Tranzit VAN RWD 470 LWB EF» մակնիշի բեռնատար ավտոմեքենան (նույնականացման համարը՝ WF0XXXTTGXGK80973, 11,960,000 դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«02» նոյեմբերի 2017թ.

**« Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվություն»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մի շարք շինարարական մասնագիտություններ ձեռքբերելու համար նախատեսված հատուկ արհեստանոցներում գործնական պրակտիկայի իրականացման ժամանակ օգտագործվող շինանյութի տեղափոխման անհրաժեշտությունից ելնելով, ապահովել Եզնիկ Մոզյանի ուսումնարանը բեռնատար մեքենայով:<br><br>Ուսուցումն անցկացվում է բացառապես անվճար հիմունքներով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արցախի Հանրապետություն, Շուշի քաղաք, կրթության բնագավառ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/20175-17
06.11.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
03.11.2017թ. №15/15.1/24417-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում ներառել նաև կից փաստաթղթերում նշված 40,000 ՀՀ դրամ արժեքով բեռնափոխադրման ծախսերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղալյան
Հեռ. 011 910-435

034/41501-17
06.11.17



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 11.960.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շուշի քաղաքի «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի ուսանողները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ նոյեմբերի 01-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 27-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի նոյեմբերի 02-ից մինչև դեկտեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում բեռնատար մեքենայի ձեռքբերում, ներմուծում, տեղափոխում և նվիրաբերում՝ 11.960.000,00 ՀՀ դրամ արժեքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ֆորա» ՍՊԸ-ից «Ford Tranzit VAN RWD 470 LWB EF» մակնիշի թվով մեկ հատ «Frozen White» գույնի ավտոմեքենայի ձեռքբերում, ներմուծում և անհատույց հանձնում՝ 11.960.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինե Դարբինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«08» 11 2017թ.
No 06/3-3/45915-17
Ձեր No ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 03.11.2017թ.
թիվ 15/15.1/24417-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին նվիրատվության համար՝ նախատեսվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից բեռնատար ավտոմեքեայի ներմուծում, ուստի առաջարկում ենք ներկայացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից բեռնատար ավտոմեքենայի ներմուծման և նվիրատվության ծրագիր: Դրա առնչությամբ առաջարկում ենք խմբագրել որոշման նախագծի 2-րդ, ինչպես նաև կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը՝ հստակ նշելով, որ բեռնատար ավտոմեքենան ներմուծվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/41675-17
08.11.17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

08.11.17 N 02/14/20079-17
Ձեր N ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի 15/15.1/24417-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվություն» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/41811-17
08.11.17

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին բեռնատար մեքենայի նվիրատվության» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում ներառել նաև կից փաստաթղթերում նշված 40,000 ՀՀ դրամ արժեքով բեռնափոխադրման ծախսերը: | Կից փաստաթղթերում նշված 40,000 ՀՀ դրամ արժեքով բեռնափոխադրման ծախսերը՝ դա ներքին փոխադրում է, որը չի ներառվում մաքսային արժեքի մեջ: |
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին նվիրատվության համար՝ նախատեսվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից բեռնատար ավտոմեքեայի ներմուծում, ուստի առաջարկում ենք ներկայացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից բեռնատար ավտոմեքենայի ներմուծման և նվիրատվության ծրագիր: Դրա առնչությամբ առաջարկում ենք խմբագրել որոշման նախագծի 2-րդ, ինչպես նաև կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը՝ հստակ նշելով, որ բեռնատար ավտոմեքենան ներմուծվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից: | Խմբագրված որոշման նախագիծը և ծրագիրը կցվում է: |

Հայաստան համահայկական հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund
Executive Board
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010 Կառավարական 3-րդ մասնաշենք
Government Building 3, Yerevan 0010
Republic of Armenia
tel: (37410) 52 15 05 fax: (37410) 52 37 95
E-mail: info@himnadram.org

09 նոյեմբերի 2017թ. ՀՀՀ. 5/27-568

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր սույն թվականի նոյեմբերի 2-ի թիվ ՀՀՀ.5/27-556 գրության՝ "Հայաստան" Համահայկական Հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության Շուշի քաղաքի «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի համար «Ford Tranzit» բեռնատար ավտոմեքենայի ձեռքբերման և նվիրատվության ծրագրի վերաբերյալ, ուղարկում ենք ծրագրի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 02 թերթ:

Հարգանքով՝

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Անիհնա Ղազարյան

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

նոյեմբերի 2017 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԿԽԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 01.1/14-2/-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության (Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) կողմից իրականացվող՝ 37,028,031 դրամ արժողությամբ «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՄԱՁԱՅՆԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից
02.11.2017թ.

**«ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը | Հայկական Կարմիր Խաչի ընկերության (ՀԿԽԸ) Կենտրոնական Գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ ՀԿԽԸ շահառուներին մատուցվող ծառայությունների բարելավված միջավայրի ստեղծման նպատակով: |
| դ2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Կարմիր Խաչի Միջազգային կոմիտե(ԿԽՄԿ), Ավստրիական Կարմիր խաչ, Իրանական Կարմիր մահիկ, ՄԱԿ-ի Փախստականների Գերագույն Հանձնակատարի Հայաստանյան գրասենյակ |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պարոնյան 21/1, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 37 028 031 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայկական Կարմիր Խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական, առաջին օգնության, բնակչության տեղաշարժի, երիտասարդական ուղղությունների և |

| | | |
|---|---|---|
| | | այլ ծրագրերի շրջանակներում ընդգրկված շահառուները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.11.2017թ-31.05.2018թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայկական Կարմիր խաչի ընկերության, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված է 15.11.2017-31.05.2018 ժամանակահատված և 37 028 031 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայկական Կարմիր խաչի ընկերության, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված են 37 028 031 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների | Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀԿԽԸ կողմից աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության:<br><br>Նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն:<br><br>ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի համակարգման Հանձնաժողովին սահմանված կարգով ներկայացվելու են հաշվետվություններ: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/20235-17
02.11.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
02.11.2017թ. N 15/15.9/24315-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/41645-17
02.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«06» 11 2017թ.
No 06/3-3/45442-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 02.11.2017թ.
թիվ 15/15.9/24315-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես՝ բարեգործության նպատակն է աջակցել սոցիալական, կրթության, գիտության, մշակույթի, շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում իրականացվող ծրագրերին, ինչպես նաև նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը: Այս կապակցությամբ, գտնում ենք, որ խնդրո առարկա ծրագիրն ուղղված չէ օրենքով սահմանված՝ բարեգործության որևէ նպատակի իրականացմանը, հետևաբար դրա բարեգործական որակումը որևէ կերպ հիմնավորված չէ:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» №66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 4-րդ կետի համաձայն, բարեգործական որակման ենթակա չէ կազմակերպության՝ իր աշխատողների կամ իր առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի, կամ դրանց աշխատողների սպառողական պահանջմունքների բավարարման ծրագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3.7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Ք44/41404-17
06.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

07.11.17 N 02/14/19949-17

Ձեր N ________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի 15/15.9/24315-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/41529-17
07.11.17

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես՝ բարեգործության նպատակն է աջակցել սոցիալական, կրթության, գիտության, մշակույթի, շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում իրականացվող ծրագրերին, ինչպես նաև նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը: Այս կապակցությամբ, գտնում ենք, որ խնդրո առարկա ծրագիրն ուղղված չէ օրենքով սահմանված՝ բարեգործության որևէ նպատակի իրականացմանը, հետևաբար դրա բարեգործական որակումը որևէ կերպ հիմնավորված չէ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» №66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 4-րդ կետի համաձայն, բարեգործական որակման ենթակա չէ կազմակերպության՝ իր աշխատողների կամ իր առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի, կամ դրանց աշխատողների սպառողական պահանջմունքների բավարարման ծրագիրը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար: | Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից ներկայացված պարզաբանումը կցված է: |
| | |
| | |

Armenian Red Cross Society

**Հայկական Կարմիր խաչի ընկերություն**

0015, ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 21/1, Հեռ.՝ (+374 60) 62 50 50, Ֆաքս՝ (+374 60) 62 50 72
Էլ. փոստ՝ redcross@redcross.am, ինտ. կայք՝ www.redcross.am
21/1, Paronyan str., Yerevan, 0015, RA, tel.: (+374 60) 62 50 50, fax: (+374 60) 62 50 72
E-mail: redcross@redcross.am, Web site: www.redcross.am

N 407

"06" 11 2017 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՆ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆԻՆ

Պատճեն՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրումյան,

Թույլ տվեք ներկայացնել պարզաբանում Ձեր 06.11.17թ. թիվ 06/3-8/45442-17 գրության վերաբերյալ.

1920 թվականից ի վեր Հայկական Կարմիր խաչի ընկերությունը իրականացնում է իր առաքելությունը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ համախմբելով մարդասիրության ուժը ազգաբնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակի շուրջ: Հիմնադրման պահից ի վեր Ազգային ընկերությունը տարիներ շարունակ ակտիվ և լայնածավալ գործունեություն է իրականացնում՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում և ցուցաբերելով իր անաչառ օգնությունը բազմազան ոլորտներում, ինչպիսիք են սոցիալ-առողջապահական, առաջին օգնության, աղետներին նախապատրաստման, արձագանքման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, բնակչության տեղաշարժի, որոնման, բնապահպանական և այլն: Բազմաթիվ շահառուներ օգտվում են ՀԿԽԸ կողմից մատուցվող ծառայություններից և այս գործունեությունը կրում է շարունակական բնույթ:

ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի հիմնանորոգման աշխատանքների ծրագրի նախագիծը միտված է ՀԿԽԸ շահառուներին ուղղված ծառայությունների մատուցման միջավայրի բարելավման նպատակին: Ներկայում ՀԿԽԸ կողմից մատուցված ծառայություններն են սոցիալական աջակցություն և խնամք, հիվանդությունների կանխարգելում և առողջ ապրելակերպի խթանում, սոցիալ-հոգեբանական աջակցություն, իրազեկվածության բարձրացում, ինտեգրման խթանում, աղետների ռիսկի կանխարգելման և արտակարգ իրավիճակների արձագանքման և հետևանքների վերացման միջոցառումներ, փախստականների խորհրդատվություն և ուղղորդում, առաջին օգնության վերաբերյալ գիտելիքների տարածում, ընտանեկան կապերի վերամիավորում, երիտասարդների մոբիլիզացում և կրթում, քաղաքացիական ակտիվության խթանում:

Տարեկան միջինում 270.000 շահառուներ օգտվում են վերը նշված ծառայություններից, որոնց մի մասը մասնավորապես սիրիահայեր, անհայտ կորածների ընտանիքներ, երիտասարդներ և տարեցներ անմիջականորեն ստանում են ծառայություն ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակում, մասնավորապես կրթական միջոցառումների, սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրման, նյութական աջակցության բաշխման շրջանակներում:

Դիմում եմ Ձեզ խնդրանքով հաշվի առնել վերը նշված պարզաբանումը:

Հարգանքով

Գլխավոր քարտուղար

Ա. Եղիազարյան

107-41544

07 11 17

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2017 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

«ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ԻՆ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 01.1/80-2/-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01238936) կողմից իրականացվող՝ 4,855,000 դրամ արժողությամբ «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Իջևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ  Է

«Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ»
Հայաստանի մասնաճյուղի ծրագրերի
համակարգող Ն. Ծաղիկյանի կողմից
«09» նոյեմբերի 2017թ.

««Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին նվիրաբերել ուսանողների և աշխատակազմի անվճար տեղափոխության համար միկրոավտոբուս: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ», Հայաստանի մասնաճյուղ, հասցեն՝ ք. Երևան, Ամիրյան 8/26, ՀՎՀՀ՝ 01238936 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ», Հայաստանի մասնաճյուղ, հասցեն՝ ք. Երևան, Ամիրյան 8/26, ՀՎՀՀ՝ 01238936 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան փողոց 5<br>Բնագավառը՝ կրթություն (միջին մասնագիտական և արհեստագործական) |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4,855,000 (չորս միլիոն ութ հարյուր հիսուն հինգ հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ, ք. Իջևան, Նալբանդյան փողոց 5, ՀՎՀՀ՝ 07601399 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20.11.2017 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Քոլեջը գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքում: Սակայն, ուսանողների կեսից ավելին դասերի հաճախում են Իջևանին հարակից համայնքներից: Քանի, որ այդ շրջանում արդյունավետ գործող հասարակական տրանսպորտ չկա, ուստի ուսանողներից շատ շատերը՝ հնարավորություն չունեն (հատկապես՝ ձմռան ամիսներին) պատշաճ կերպով հաճախելու իրենց դասերին: Այս խնդրի կարգավորման նպատակով և քոլեջում դասապրոցեսի անխափան կազմակերպման համար՝ նախատեսվում է հատկացնել «Ford Transit» մակնիշի միկրոավտոբուս, որը կծառայի քոլեջի ուսանողներին |

| | | |
|---|---|---|
| | | և նաև աշխատակազմին անվճար հիմունքներով տեղափոխելու նպատակին: Նախատեսվում է՝ 20.11.2017 – 31.12.2017 ժամանակահատվածում ներմուծել և նվիրաբերել միկրոավտոբուսը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ 10,000 ԱՄՆ դոլար: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ներմուծել «Ford Transit» մակնիշի միկրոավտոբուս և այն նվիրաբերել «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին: Միկրոավտոբուսի համար նախատեսվում է՝ 10,000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցային աշխատանքներ նախատեսվում են՝ «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի միջև: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի ավարտից հետո «Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղը վերջնական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/20390-17
09.11.2017

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
06.11.2017թ. N 15/15.9/24487-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծի 1-ին կետում և կից ներկայացված ծրագրի 6-րդ կետում նշված 4,484,000 ՀՀ դրամ գումարը չի համապատասխանում ծրագրի կազմման օրվա դրույթյամբ 9-րդ և 10-րդ կետերում նշված ԱՄՆ դոլարի փոխարժեքին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բադալյան
Հեռ. 011 910-435

034/4/833-1
09.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«08» 11 2017թ.
No 06/3-8/45916-17
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 06.11.2017թ.
թիվ 15/15.9/24487-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի Մասնաճյուղի կողմից իրականացվող «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

«Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին ավտոմեքենայի անհատույց հատկացման անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ ներկայացված ծրագրից պարզ չէ, թե ի՞նչ հիմունքներով է կազմակերպվելու ուսանողների և աշխատակազմի տեղափոխումը՝ վճարովի, թե անվճար:

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/41626-17
08.11.17

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

08.11.17 N 02/14/20078-17
Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի 15/15.9/24487-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ ուսանողական փոխադրամիջոցի տրամադրում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/41810-17
08.11.17